ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/83

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9256-2019 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Բաբայանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 29.05.2019թ. թիվ 01/61-10035 գրության հիման վրա, 04.06.2019թ. թիվ 26/26-1/9256-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Գրիգոր Բաբայանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Գրիգոր Բաբայանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Գրիգոր Բաբայանի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/83 ընթացակարգի շրջանակներում 14.06.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.05.2019թ. թիվ 01/61-10035 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Գրիգոր Բաբայանի միջև 25.01.2019թ. կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/30-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (հետայսու՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ էր սահմանված՝ 1-ին եռամսյակ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 20 օրացույցային օրվա ընթացքում, 2-րդ եռամսյակ՝ մինչև 30.06.2019թ., 3-րդ եռամսյակ՝ մինչև 30.09.2019թ. և 4-րդ եռամսյակ՝ մինչև 15.12.2019թ.:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Դավթաշեն 3-րդ թաղամաս վարչական շրջանի վարչական շենք, յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 12:00:

Պայմանագրի 2.1.1. կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Վաճառողի կողմից ընդհանրապես չեն իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 347-րդ, 408-րդ հոդվածները և 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետը, Պայմանագրի 2.1.7.1 կետը, 2.1.7.1. կետի «բ» ենթակետը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վաճառողի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/83 ընթացակարգի շրջանակներում 14.06.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/83 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Գրիգոր Բաբայանի միջև 25.01.2019թ. կնքվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/30-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է Պայմանագրով սահմանված սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված

ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Ա/Ձ Գրիգոր Բաբայանի ուղղված 20.05.2019թ. թիվ 61/9229 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9256-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 29.05.2019թ. թիվ 01/61-10035 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և Ա/Ձ Գրիգոր Բաբայանի միջև 25.01.2019թ. կնքվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/30-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է Երևանի քաղաքապետարանին մատակարարել ընդհանուր 4560 լիտր խմելու ջուր, որից 1140 լիտրը՝ 1-ին եռամսյակում, Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 20 օրացույցային օրվա ընթացքում, 1140 լիտրը՝ 2-րդ եռամսյակում, մինչև 30.06.2019թ., 1140 լիտրը՝ 3-րդ եռամսյակում, մինչև 30.09.2019թ., 1140 լիտրը՝ 4-րդ եռամսյակում, մինչև 15.12.2019թ.:

Պայմանագրի 8.15-րդ կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Կողմերի միջև 28.02.2019թ. կնքվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/30-1» ծածկագրով պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որով հաստատվել է վճարման ժամանակացույցը՝ համաձայն համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

Ա/Ձ Գրիգոր Բաբայանին ուղղված 20.05.2019թ. թիվ 61/9229 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ Մասնակցի կողմից ընդհանրապես չեն իրականացվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ Ա/Ձ Գրիգոր Բաբայանը թույլ է տվել վերջինիս և Երևանի քաղաքապետարանի միջև 25.01.2019թ. կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/30-1» պայմանագրի էական խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Մասնակիցը Պայմանագրի և դրա անբաժանելի մասը հանդիսացող N 1 Համաձայնագրի համաձայն՝ պարտավորվել է սահմանված ժամկետներում Երևանի քաղաքապետարանին

մատակարարել համապատասխան քանակի «խմելու ջուր» ապրանքատեսակը, որը սակայն ընդհանրապես չի մատակարարել:

Գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.06.2019թ. թիվ 26/26-1/9256-2019 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Բաբայանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Գրիգոր Բաբայանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**